ուրիշներ. — ակնարկ մը կայ Փաւստոս Բիւզանդի քով (Դ. գլ.)։ Որոշ վկայութիւն մը կեսարիոյ (Կապադովկացւոց) Ղեւոնդ Պատրիարքէն մեր Գրիգոր Լուսաւորչին ուղղուած նամակին մէջ, մէջբերուած Զենոբ Գլակէն (Դ. գլ.)[24]։ Ուրիշ յատակ վկայութիւն մ'ալ ունինք Ստեփանոս Սիւնեցիի քով (Ը. գլ.) (տես Գիրք Թղթոց 323)։ Պակաս չեն վկայութիւններ նաեւ յոյն և ասորի հեղինակներէ, այսպէս օր. յոյներէն՝ Նիկեփոր Կալլիստոս՝ Ը. դարուն (տես պատ. Եկղ. Բ. Լթ.), Նիկետաս Դաւիթ՝ Թ. դարուն վերջերը (տես P. G. 105, էջ 208. Վարք սրբոց, թ. 475, 452) և ուրիշներ։ Ասորիներէն՝[25], Միքայէլ ԺԲ. դարուն, Դիոն. Բարսալիբի նոյնպէս ԺԲ. դարուն, Բարհեբրէոս՝ ԺԳ. դարուն (տես Chabot, Chron. I. 148)[26]։ Ասոնցմէ զատ «երկոտասան Առաքելոց» ճառին մէջ, մեր Ճառընտիրներուն մէջ Ս. Տրդատոսի տրուած, կը յիշուի Ս. Բարթողիմէոսի Հայաստան գալը և հոն նահատակուիլը[27]։ Այս բոլորէն կը հետեւի որ բոլորովին անհիմն աւանդութիւն մը պէտք չէ նկատել։

Ծան. բ) Խիստ քննադատ մը կրնայ ըսել որ Մ. Խորենացիի վերոյիշեալ նամակին մէջ, յայտնի կերպով չի յիշուիր Ս. Կոյսի մարմնով և հոգւով վերափոխուիլը, այլ թէ անոր ամենասուրբ մարմինը երեք օրուան երգերէն վերջ հրեշտակներու ձեռքով երկինք կը փոխադրուի[28]։ Որուն քանի մը խօսքով միայն պատասխանելէն առաջ, անգամ մը եւս կ'անդրադարձնենք, որ այս ուսումնասիրութեան մէջ բուն նպատակնիս չէ վերափոխման վարդապետութեան կերպը բացատրել մեր քով, այլ պարզապէս անոր գոյութեան ժամանակը։ Գալով ըժուարութեան, կը յանձնարարեմ նախ և առաջ որ վերոյիշեալ պատմութիւնը իր բոլոր ամբողջութեամբ նկատուի, մասնաւորապէս եղած դժուարութեան նախընթաց մասը[29]։ Կամ նոյնիսկ ուղղակի կրնանք պատասխանել այսպէս. — Նամակին մէջ կ'ըսուի որ Ս. Կոյսի մարմինը երկինք կը փոխադրուի. արդ շատ բանաւոր է ենթադրելը անոր միաւորութիւնը հոգւոյն հետ, կամ փոխադրութենէն առաջ կամ անկէ անմիջապէս վերջ երկնքի մէջ։

Հ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՅԵԱԹ

(շարունակելի)

(24) Հմմտ. Զենոբ Գլակ «Պատմութիւն Տարօնոյ», Վենետիկ 1832, էջ 10, Հ. Գաբրիճեանին համաձայն Է. դարու գրութիւն է այս նամակը (տես Ս. Պատրգմ. էջ 76 ծանոթ. 2)։

(25) Օր. հմ. Մար. Մալլոն կ'ըսէ «cadaver S. Bartolomei ut putent Caldaei est in Armenia» (տես Ասսեմանի Դ. 306. մէջբերուած Հ. Բ. Սարգիսեանէն Բազմ. նոյն տ. էջ 114, ծանօթ. 4)։

(26) Հմմտ. այս բոլորին համար Հ. Վ. Հացունիին «Կարեւոր ինդիրներ Հայ Եկեղեցւոյ Պատմութենէն», Վենետիկ 1927, էջ 61–67 (այնուհանդերձ որ նա տարբեր կարծիքի է)։

(27) Հմմտ. «Ճառընտիր Բ.», «Յուցակ Հ. Զեռաղրաց»ին մէջ սիւն 40, յօդ. 16 (ինչպէս նաեւ Բազմ. նոյն տ. էջ 114, ծանօթ. 3)։

(28) Հմմտ. Մ. Խորենացի, նոյն տ. էջ 294։

(29) Նոյն տ. էջ 290 «Հրաւիրեալ Սրբուհին ի փոխումն առ Որդին իւր... ժողովեալ աշակերտացն... ի յդարկել զԱստուածամայրն իւրեանց»։

ԾԱՆՕԹ. — Այս բանախօսութիւնը կարդացուեցաւ 1949-ի Նոյեմբեր 8-ին, երբ պաշտօնական բացումը կը կատարուէր Մխիթարեան Ճեմարանի գործունէութեան տարեշրջանին. (ըստ աւանդութեան միշտ Ս. Յովհան Ոսկեբերանի տօնին օրով)։

Բանախօսութենէն վերջ, ներկայ Վ.Վ. Հայրերէն ոմանք բանասիրական առարկութիւններ կատարեցին. վիճաբանութիւնը զօրացաւ Մ. Խորենացիի նկատմամբ. մանաւանդ յիշուած նամակին հարազատութեան հարցը շատ կնճռոտ երեւցաւ, ըլլայ պատմական ակնարկներու, ըլլայ նաեւ լեզուական դժուարութիւններու պատճառով, որոնց շուրջը կը մնայ տակաւին քննելի և ուսումնասիրելի։

ԽՄԲ.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԶԱՐՄԱՀԱԼ ԳԱՒԱՌԻ ԽՈՏԱԲՈՅՍԵՐԸ

Իրանի Սպահան նահանգի Զարմահալ գաւառը հարուստ է բազմերանգ խոտաբոյսերով, որոնք դեռ բանասիրական լուրջ ուսումնասիրութեան նիւթ չեն դառնալ։ Դրանցից յատուկ ուշադրութեան արժանի են մէկը միւսից գեղեցիկ տերեւներով և գոյնզգոյն ծաղիկներով զարդարուն ինքնաբոյս խոտերը, որոնք որպէս մարգկանց և անասունների ապրուստի հիմնական աղբիւր, գիւղացիների տնտեսական կեանքում այնքան նշանակալից դեր են կատարում։ Այդ խոտերից ոմանք ունեն նաեւ բուժիչ յատկութիւն և գեղջուկների առողջապահութեանը մեթիւն և գեղջուկների առողջապահութեանը մեծապէս նպաստում են։ Կան խոտեր էլ, որոնք արտադրում են ընտիր ներկեր և իրենց սիրուն երանգներով փայլ տալիս գորգագործութեան արեւստին։ Բոյսերից ոմանք էլ ունեն անոյշ բուրմունք և բարձրացնում են օդու, պանրի ու թանի առանձնայատկութիւնը։ Կան բոյսեր, որոնցից մեղուները նեկտար են հաւաքում։

Զարմահալում բաւական զարգացած է նաեւ արհեստական խոտացանութիւնը։ Գիւղացիները խորապէս հասկացել են, որ խոտաբուծութիւնն անասնապահութեան անչափ նպաստում է, ուստի արհեստական կերպով խոտ ցանելը հոգագործութեան հիմք են դարձրել։ Այդ մշակոյթից նրանք օգտւում են կրկնակի տեսակէտից. առաջին՝ նման հողերից շատ բերք են ստանում, երկրորդ՝ այդպիսի հողերը, հանգստացած տարում, մեծ քանակութեամբ ընտիր խոտ են տալիս, և երրորդ՝ նման հողերում, երբ հացաբոյս են ցանում, էլ աւելի առատ հացահատիկ են ստանում։ Նկատենք մի կարեւոր հանգամանք եւս. գիւղացիները խոտերի սերմերը ձեռք են բերում հէնց իրենց արօտներից, որտեղ բուսած լաւ խոտերը թողնում են որ մեծանան և հասնեն, ապա դրանց սերմերը ժողովում են. մաքրում և ցանում արտերում։ Ընդհանրապէս պիտի ընդգծել, որ Զարմահալի թէ դաշտային և թէ լեռնային բուսականութիւնը հոխ է, բազմազան և գունագեղ։ Սարերի ու դաշտերի վրայ Ապրիլ ամսից ծլում են ու ծաղկում թաւշեայ գալարով բազմազան բոյսեր. որոնք երբ զարդարում են երփներանգ ծաղիկներով, իրենց նկարչական գեղեցկութեամբ գրաւիչ տեսարան են ներկայացնում և ամէն մի զգայուն հոգու մէջ զարթեցնում են բանաստեղծական խոհեր, յոյզերու տրամադրութիւններ։ Բնութեան այդ սքանչելի պատկերներից տաղանդաւոր նկարչի վրձինը կարող է մի հրաշալի լեռնային կամ դաշտային նկար կերտել։ Բայց Զարմահալի խոտաբոյսերի մասին աւելի ցայտուն գաղափար տալու համար այստեղ դնենք իւրաքանչիւրի սեղմ պատկերը։

1. ԴԱՇՏԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա.

ՑԱՆՈՎԻ

Շաւդառ։ Ցանում են Յուլիսին և մի ամբողջ ձմեռ ճնում է ձիւնի տակ։ Հնձում են երեք անգամ՝ Ապրիլի վերջում, Մայիսի 30-ին և Յուլիս 10-ին։ Եղջիւրաւոր անասունների համար շաւդառի ծաղիկներն անչափ սննդարար են։ Նոյնպէս մեղուները շատ սիրահար են այդ ծաղիկներին, որոնցից առատ նիւթ են քաղում։

Չօռաղ (հոլղար)։ Ապրիլին ցանում են և Օգոստոսին քաղում։ Զորացնում և ձմեռը, որպէս կեր, անասուններին են տալիս.

Եօնչա (առուոյտ)։ Ցանում են աշնան և 7 տարի հնձում։ Ունի երեք փոքրիկ տերեւներ, մանիշակագոյն ծաղիկներ և երկար արմատներ։ Անասունների համար ամենասննդարար խոտաբոյսն է։

Քիսիկ (կեվտանա)։ Ապրիլին ցանում են և Յուլիսին քաղում։ Անասունների կեր է։

Շանրիդա։ Ապրիլին ցանում են և Յուլիսին հնձում։ Ուտում են անասունները։

Վարսակ։ Շատ կարեւոր խոտաբոյս է. տալիս է ծղոն և հատիկ, որոնք, իբրեւ կեր, ձիերի համար շատ օգտակար են։

Բ.

ԻՆՔՆԱԲՈՅՍ

Դաղձ։ Առուների և աղբիւրների մօտ է աճում։ Թարմ ժամանակ գիւղացիները հաց ու պանիրով ուտում են, իսկ երբ չորանում է, շատ անոյշ հոտ ունի։ Փշրում են թանի մէջ և խմում։

Ճարճատուռ։ Քաղում են դաշտերից. արմատն եռացրած ջրով եփում են և ուտում։

© National Library of Armenia

Ապրիբեր։ Առուների եզրերում է բուսնում։ Որպէս թեր զցում են թանապուրի մէջ։

Բազուկ։ Աճում է շաւդառի մէջ. անհաց ուտում են։

Խոզնատոզ։ Նման է սինձին. միայն արմատներն են տարբերում։ Մարգագետինների (չայիրների) միջից են քաղում, աղցան պատրաստում, ապա կաթով, իւղով և ձուով տապակում են և ուտում։

Բիրշարուխ։ Քաղում են դաշտերից. տերեւներից աղցան են պատրաստում, իսկ արմատը, որ կոչւում է ատոշ, անհաց ուտում են։

Զորանիսարիչ։ Շատ նման է բլբլշարուխին, բայց դառն է։ Ուտում է ոչխարը։

Բարձմանուկ։ Բսնում է դաշտերում։ Իր գեղեցկութիւնն են կազմում կանաչ մանր ու շատ նուրբ տերեւները և դեղին կամ սպիտակ ծաղիկները։ Ունի անոյշ հոտ։ Թարմ ժամանակ յատկապէս ուտում են ոչխարները։

Սիրեխ։ Դաշտերում է բսնում։ Ունի երեք կանաչ տերեւներ և երկար ցօղուն։ Ջրով եփում են. քամում և աղցան պատրաստում կամ իւղով ու ձուով տապակում։

Խառուկ։ Բսնում է դաշտերում։ Աղցան են պատրաստում։

Բաքաղուք։ Աղբիւրների և առուների ջրերի մէջ է բսնում։ Հացով ուտում են։

Պօպղ։ Աճում է մարգագետիններում։ Արմատն ուտում են հացով կամ անհաց։

Խրխնդուք։ Ունի 1 1/2 մետր բարձրութիւն. կանաչագոյն է. բսնում է մարգագետիններում և առի եզրերում։ Եփում, աղցան են պատրաստում և ուտում։

Խաքրչի։ Բսնում է առի եզրերում։ Ունի մեծ թփեր և նուրբ ճիւղեր. թարմ ժամանակ կանաչ է, իսկ երբ հասնում է, ճերմակում է. գլխին ունի վարդանման կոկոն։ Երբ բացւում է, շուրջը բսնում են տերեւները, իսկ ներսում՝ դեղին հատիկներ, որոնք քաղում են, եռթն անգամ ջրով լւանում, ապա մի բաժակ ջուր ածում, շաքարաւազով քաղցրացնում և տալիս հիւանդին։ Մաքրում է ստամոքսը, կարում տաքութիւնը և նպաստում մարսողութեանը։

Կապոյտ եօնջա։ Բսնում է դաշտերում և արտերում։ Բազմաթիւ ճիւղերով տարածւում է գետնի վրայ։ Ուտում են անասունները։

Դեղին եօնջա։ 20–30 սնտմ. բարձրութեամբ ուղիղ վերեւ է տարածւում։ Բսնում է դաշտերում։ Զորացնում և տալիս են անասուններին։ Կանաչ ժամանակ կովը և եզը չեն ուտում, որովհետեւ ուռչում են։

Տօրօն։ Բսնում է խաղողի այգիներում, արտերի մօտ։ Ունի 10 սնտմ. բարձրութիւն։ Նոյնքան էլ հողում արմատն է աճում։ Կարմրագոյն է։ Գորգի համար ներկում են երեք տեսակ թելեր՝ կարմիր, նարնջագոյն և վարդագոյն (սուրաթի), որոնց առանձնայատկութիւնն այն է, որ իրենց գոյներն երբէք չեն փոխում։

Ճիլ։ Ճահիճներում է բսնում։ Կանաչ է և թուփ–թուփ։ Ունի բազմաթիւ տերեւներ (թերեր), որոնց թաց ժամանակ ոլորում են իրար հետ և պարան պատրաստում, անասուններին ախոռում կապելու համար։

Թալիաց։ Բսնում է դաշտերում և մասամբ էլ սարալանջերում։ Բարձրութիւնն է 40 սնտմ.։ Կապոյտ է և ունի դառն հոտ։ Բացի եզներից, բոլոր անասուններն էլ ուտում են։

Դառնիչ։ Բսնում է դաշտերում։ Կանաչ–մոխրագոյն տերեւներին առանձին գեղեցկութիւն են տալիս փոքր սպիտակ ծաղիկները։ Բարձրանում է 20–25 սնտմետր.։ Քաղում, չորացնում և տալիս են ոչխարներին։ Անախորժ և դառն հոտ ունի։ Ոչխարների ամենասիրելի և սննդարար կերն է։

Դառնաչիլ։ 50 սնտմ. բարձրագիր կանաչ բոյս է, որը թարմ ժամանակ խիստ դառն հոտ ունի։ Սեպտեմբերին քաղում են դաշտերից և աւել պատրաստում, գլխաւորապէս կալը մաքրելու համար։ Ուտում են նաեւ անասունները։

Եղաչիլ։ Կակուղ, նուրբ բոյս է, բաց–կանաչ գոյնով և 50 սնտմ. բարձրութեամբ։ Բսնում է դաշտերում։ Ուտում են անասունները։ Երբ հասնում է, պատրաստում են աւել և մաքրում տան սենեակները։

Քօձակ։ Ունի 15 սնտմ. բարձրութիւն և գոյն–գոյն կոճակներ։ Շատ դառն է։ Թարմ ժամանակ դաշտերից քաղում են և անասուններին կերակրում, իսկ գարնան գիւղական աղջիկները փնջեր են կապում և սենեակներում կախում։

Կարնուկ։ Բսնում է ճահճոտ տեղերում։ Ունի մուգ–կապոյտ երանգով ծաղիկներ և արտադրում է շատ դառն կաթ։ Քաղում, չորացնում և ձմեռը տալիս են անասուններին։

Վարդապետ։ Բսնում է դաշտերում և ցանքերի մէջ։ Բարձրութիւնն է 10 սնտմտր.։ Գեղեցկութիւնն են կազմում կանաչ տերեւները և

կատարին՝ ցորենի հատիկների նման բացւած խիտ և կապոյտ ծաղիկները։ Ծաղկում է Զատկին։ Երեխաները քաղում են և ձու ներկում. Ծաղիկներն ուտում են ոչխարները։

Բաշասաև ծաղիկներ։ Բսնում է խոնաւ և հոտաւէտ տեղերում։ Հինգ սանտիմետր բարձրութիւն և բարակ ցօղուններ ունի։ Առանձին գրաւչութիւն են տալիս վարդանման և 7 տեսակ գոյներով բացւող մանր ծաղիկները, որոնց քաղում և ածում են մի շշի մէջ, վրան մի կաթիլ ջուր և մի կաթիլ իւղ կաթեցնում, ապա փակում և ամբողջ երկու ամիս դնում արեւում։ Ծաղիկների հիւթը դառնում է իւղանման, որը կոչւում է բալասան ծաղկի իւղ։ Դա բուժիչ յատկութիւն ունի. բժշկում է մարմնի այրւած մասերը։

Գեաջան։ Բսնում է ճահիճներում։ Ունի 40 սնտմ. բարձրութիւն և դանակի շեղփի նման տերեւներ (թերեր), որոնք հարուստ են բազմաթիւ թփերով։ Գեղեցկութիւնն են կազմում կանաչ, դեղին և ճերմակ ծաղիկները։ Ապրիլին քաղում են, չորացնում և Դեկտեմբեր–Յունուար ամիսներին տալիս են անասուններին։

Ջիլ խոտ։ Ղիսաղ բոյսին շատ նման է. բաց–մոխրագոյն է և ունի 20 սնտմ. բարձրութիւն։ Քաղում են մարգագետիններից, չորացնում և Յուլիս–Օգոստոս ամիսներին կերակրում են անասուններին։

Սիրիկ։ Բսնում է առի եզրերում. նման է շաւդառին. ունի կանաչ և թուփ–թուփ մանր տերեւներ։ Անասունների ամենասիրած խոտն է. ուտում են թէ թարմ և թէ չոր ժամանակ։

Փարարուկ (փարարառուկ)։ Երկար ճիւղերով տարածուած է արտերում։ Ունի կանաչ լայն տերեւներ։ Փաթաթւում է իր մօտ գտնւած բոյսերին, որից առաջացել է իր անունը։ Գարբոյսերին, որից առաջացել է իր անունը։ Գարնան հնձում են բոյսերի հետ և տալիս անասուններին։ Նոյնպէս չորացնում են և ձմեռ ժամանակ կերակրում կենդանիներին։

Փիզօռ։ Բսնում է գետեզրում և արմատը միշտ ջրումն է։ Ունի մօտ 2 մետր բարձրութիւն։ Ունի մանր թփեր, իսկ գագաթին բամբիւն և բազմաթիւ թփեր, իսկ գագաթին բամբակի նման սպիտակ փունջ։ Քաղում, չորացնում և ձմեռը տալիս են անասուններին։ Գործածում են նաեւ տան յարկը պատրաստելիս. երբ ամրացնում են գերանները, ծածկում են նախ բարակ ճիպոտներով, ապա փիզօռներով։

Ղայրանղամիշ։ 10 սնտմ. բարձրագիր բոյս է, գլուխը մոխրագոյն կոճակներով զարդարուն, որոնց երեխաները քաղում են, կեղեւը պոկում և ճերմակ միջուկն ուտում։ Թարմ ժամանակ և ճերմակ միջուկն ուտում։ Թարմ ժամանակ ուտում են նաեւ անասունները։ Բսնում է արտերում։

Նարնաց։ Բսնում է մարգագետիններում։ Ունի մուգ–կանաչ գոյն և 10 սնտմ. բարձրութիւն։ Հնձում են Յունիսին, չորացնում և ձմեռն անասուններին տալիս։

Կօժղան։ Բսնում է գլխաւորապէս Լիվասեան, Աղբուլաղ, Քօնարք և Սիրաք գիւղերի ջրառատ տեղերում։ Ունի 30 սնտմ. բարձրութիւն և բազմաթիւ ցօղուններու թուփեր։ Անասունների համար ձմրան պաշար է։

Եզան լեզու։ Ունի 3–4 կանաչ, լայն և եզան լեզուի նման տերեւներ։ Բսնում է բաղջաներում (պարտէզներում) և առի եզրերում. անասունների կեր է։ Ունի բուժիչ յատկութիւն. մատների կեր է։ Ունի բուժիչ յատկութիւն. մատնացաւի դեղ է. դնում են նաեւ վէրքի վրայ և թարախը քաշում։

Բարբանք։ 20 սանտմ. բարձրութեամբ այս տունկն ունի 3–4 լայն տերեւներ։ Գլուխը հարուստ է սերմերով։ Բսնում է առի եզրերում և բաղջաներում։ Կրծքացաւի դեղ է. եփում են և ջուրը խմում։

Զաքեան։ Բսնում է դաշտերում։ Փուում է գետնին և զարդարում սպիտակ ծաղիկներով։ Սրա հիւթը շատ դառն է։ Թարմ ժամանակ ծեծում և դնում ոսկրացաւ կամ ուռուցք ունեցող հիւանդների վէրքի վրայ։

Ծժուկ։ Բսնում է դաշտերում։ Ունի մի մետր բարձրութիւն և հաստ ցօղուններ։ Իր գեղեցկութիւնն են կազմում կապոյտ–մանիշակագոյն ծաղիկները, որոնց ջրով եռացնում են և թոքերը մրսած հիւանդին տալիս։

Սաղլաբ։ Բսնում է դաշտերում և յատկապէս ցանքերի մէջ։ Ունի 10 սնտմ. նուրբ ցօղուն և նոյն երկարութեամբ էլ բարակ տերեւներ։ Կատարին բացւում են 4 հատ մանիշակագոյն ծաղիկներ։ Ուտում են անասունները, իսկ կրծքացաւ ունեցողները թարմ ժամանակ ուտում են կամ չորացնում, եփում և ջուրը խմում։

Պողոսիկ։ Բսնում է դաշտերում, յատկապէս առի եզրերը։ Այնքան խիտ է աճում, որ կաւրելի է մանգաղով քաղել։ Ունի մօտ կէս մետր բարձրութիւն և մանր ու դեղին ծաղիկներ։ Քաղում են, չորացնում և ձմեռը տալիս անասուններին։ Սրա էական յատկութիւնն այն է, որ հողին կարողութիւն է տալիս։ Երբ վարում և

© National Library of Armenia

որեւէ հացաբոյս են ցանում, շատ առատ բերք են ստանում։

Իժոռ միրուանք։ Հազւագիւտ մի բոյս է։ Ունի 20 սնտմ. բարձրութիւն և շատ մանր կանաչ տերեւներ, որոնք նման են այծի մօրուքի մազերին։ Սրա մի թուփի վրայ կան 2–3 բարձր տունկեր. որոնք զարդարւած են դեղին ծաղիկներով։ Բնում է արտերում։ Թարմ ժամանակ տերեւներն ու կեղեւը պոկում են և ճերմակ միջուկն ուտում։ Այս բոյսը հազւագիւտ մի դեղ է, որովայնն ուռած հիւանդներն եփում են, ուտում և բժշկւում։

Ոչի յանգաչ։ Տարածւում է դաշտերում՝ հողի վրայ։ Կպչուն խոտ է թփերով և տերեւներով զարդարուն, որոնք նման են ուլի ականջներին։ Զորացնում և ձմեռը տալիս են անասուններին։

Իշու փուշ։ Մօտ մի մետր բարձրագիր, կապոյտ, փշածածկ թերերով և գլուխը փնջով զարդարուն այս խոտը, բնում է դաշտերում և գլխաւորապէս խոնաւ տեղերում։ Որքան բարձրանում է, նոյնքան էլ արմատը հողումն է աճում։ Իշուկների ամենասիրած կերն է. դրա համար էլ կոչում են իշու փուշ։

Գաբոռ։ Բարձրութիւնն է 10 սնտմ։ Ունի մոխրագոյն և դանակի շեղբի նման տերեւներ, որոնց քաղելիս գիւղացիների ձեռքը դանակի նման կտրում են։ Բնում գետեզրում։ Ուտում են ուղտն ու ձին։

Քոդայ։ Բնում է դաշտերում և սարալանջերում։ Կապոյտ և հաստ բոյս է, մօտ 5 սնտմ. բարձրութեամբ։ Քաղում են ցունիսին, չորացնում և ձմեռը տալիս են անասուններին։

Սեզ։ Կանաչ խոտ է, որի արմատը տալիս են անասուններին։ Աուի եզերի զարդն է։

Զոմբոռռ։ Ունի բաց-կապոյտ գոյն և 15 սնտմ. բարձրութիւն. բնում է դաշտերում։ Քաղում են ցունիսին, չորացնում և ձմեռը տալիս են անասուններին, որոնց սիրած խոտերից մէկն է։

Բիան։ 20 սնտմ. բարձրութեամբ, բաց-կանաչ տերեւներով, կպչուն և դառն խոտ է։ Ունի տարօրինակ յատկութիւն. երբ հերկում են գետինը, նոյն տեղումն էլ բնում է։ Անասունները չեն ուտում։ Լինջանցի պարսիկները ցանում են բրնձի արտերում, որպէսզի հողը կարողութիւն ստանայ։

Ճնճղանրլիր։ Բնում է դաշտերում։ Ունի մեծ թփեր, մանր տերեւներ և երկար ճիւղեր, որոնք տարածւում են գետնի վրայ. ծածկւում է մանր սաւաքի նման կոճակներով, (բլիթներով), որոնց երեխաները քաղում են և ուտում։ Ունի հովանոցի նման ճերմակ ծաղիկներ։ Ուտում են միայն ոչխարները։ Շատ են սիրում ճնճղուկները, որի համար էլ կոչւում է ճնճղաբլիթ։ Ունի բուժիչ յատկութիւն. հազի դեղ է։ Նոյնպէս ծեծում են, եփում, ճերմակ տուխտի հետ խառնում և դնում շլթի վրայ. թարախը քաշում է և վէրքը բուժում։

ՍիճնՃ։ Բնում է դաշտերում։ Պատրաստում են աղցան, կաթով կամ հում սերով և կամ հաւկիթով տապակում են և ուտում։

Բանջար։ Քաղում են դաշտերից և աղցան պատրաստում։ Նոյնպէս եփում են յատուկ կերակուր, որին կոչում են բանջար. մէջն ածում են զառզառութ և այլ համեմներ։ Սա շատ համեղ կերակուր է։

Տափակ խոտ։ Ունի լայն կանաչ տերեւներ. փռւում է գետնի վրայ։ Գարնան բնում է դաշտերում, քաղում և թարմ-թարմ տալիս են անասուններին։

Հոռ։ Բարձրութիւնն է 10 սնտմ.։ Ունի մանր, կապոյտ տերեւներ և կարմիր-կանաչ ծաղիկներ։ Բնում է հերկած վայրերում։ Վայելում են անասունները։

Շիրպի։ Բնում առուների և ամենից շատ քահրիզների առջեւ, ջրերի մէջ։ Կապում է ջրի հոսանքը։ Ունի մետրուկէս բարձրութիւն և տարին 12 ամիս կանաչ է մնում։

Ղայրարան։ Ունի կանաչ տերեւներ և կարմիր-կանաչ ծաղիկներ։ Բնում է չիմաններում։ Զորացնում և տալիս են տաքութիւն ունեցող հիւանդներին։

Քաքիչ։ Բաց-կանաչագոյն և դեղին ծաղիկներով այս խոտը բնում է կտաւահատների մէջ։ Ունի կէս մետր բարձրութիւն և սերմի հատիկներ, որոնցից ձէթ են պատրաստում, որը քսում են բոլոր այծերին և ուղտերի վէրքի վրայ։

Թոզդղան։ Բնում է գետեզրում։ Խառնում են կրի հետ և ծեփում բաղնսի պատերը։

Ջադանա։ Ունի կապոյտ ծաղիկներ, որոնց մէջ կան փոքր սեւ հատիկներ։ Քաղում են արտերից, չորացնում և ձմեռը տալիս են անասուններին։ Բարձրութիւնն է 20 սնտմ.։ Բնում է սարերում և դաշտերում։

Գէյղուշաղի։ Կանաչ-դեղնագոյն է և շատ նման է լիծու ականջներին, որից առաջացել է իր անունը։ Բնում է դաշտերում։ Ունի հարուստ փուշի. անասունները չեն ուտում։

Ուստաղուտուզ։ Բնում է առւի ափերը կամ չիման տեղերում։ Գործածում են որպէս լուծողական։

Կատուի հաղող։ Ունի 30–40 սնտմ. բարձրութիւն, բարակ, մանր տերեւներ և կարմիր-կանաչ ջրային գնդիկներ։ Բնում է այգիներում։ Գործածում են ատամնացաւ ունեցողները։

Պէժակափոշ։ Մոխրագոյն է. ունի կէս մետր բարձրութիւն, գնդաձեւ ծայր և փոքր փշեր։ Բնում է դաշտերում։ Անասուններն ուտում են թէ կանաչ և թէ չորացրած ժամանակ։

Սարչազ։ Բնում է Սիրաք գիւղի դաշտերում. Բունովի տափում։ Լայն տերեւներով փռւում է գետնի վրայ, իսկ մէջտեղի հաստ արմատը, մարդահասակ, զինւորի նման, ուղիղ, բարձրանում է, որից առաջացել է իր անունը։

2. ԼԵՌՆԱՅԻՆ ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ՍիճնՃ։ Բնում է ընդհանրապէս սարալանջերում, որի կաթից ծամոն են պատրաստում, որն անչափ սիրում են փոքրերը։

Քանգառ։ Գլխաւորապէս սարալանջերում և մասամբ էլ դաշտերումն է աճում։ Սա Զարմահալի հայ գիւղացիների պատրաստած կերակուրների զարդն է, միաժամանակ նրանց ամենասիրած և ամենապատւական բուսեղէնը, որը մաքրում են, եռացրած ջրով եփում, ապա լցնում քամած մածունի մէջ, խառնում և ուտում։ Սրան կոչում են Քանգառմաստ։ Երբ քանգառը «պառնում» է, քաղում են, չորացնում և ձմեռը ոչխարներին կերակրում։

Զօղա։ Սրանով հարուստ են Ջոմբինի և Քեալլար սարը և Զար բազար հովիտը։ Երբ թարմ է, գիւղացի երեխաները փշոտ կեղեւը պոկում են և կանաչ միջուկն ուտում, իսկ երբ հասնում է, «պառնում», քաղում, չորացնում և ձմեռը մանրացնելով՝ կերակրում են ոչխարներին։

Ճերմակ բանջար։ Բնում է սարերում և լեռնադաշտերում։ Ունի սպիտակ-մանիշակագոյն փնջանման ծաղիկներ։ Երեկոյեան թառամում է, իսկ արեւածագին բացւում ու գեղեցկանում։ Սպիտակ արմատը շաքարի նման քաղցր է, իսկ իր մէջ, սինձի նման, ունի քաղցր կաթ։ Ուտում են անասունները, յատկապէս շատ սննդարար է ոչխարների համար։

Զօղան։ Զօլի արմատը կոչում են չօղան, որ երեք մետր խորութեամբ բնում է հողում։ Փոքրիկով հանում են հողից, մաքրում դանակով, չորացնում և ծեծում, ապա լցնում են եռացրած ջրի մէջ և լւանում բրդեղէն ու կտաւեղէն զգեստները։

Ղանղովի։ Բնում է լեռնալանջերում կամ ստորոտներում։ Ամէն տարի արմատից կանաչում և դառնում է մի մեծ և լայն թուփ։ Բարձրանում է մօտ կէս մետր։ Ունի սպիտակ, կլոր ծաղիկներ։ Աճում է գարնան և ապրում մինչեւ աշուն։ Ուտում են անասունները։ Նոյնպէս քաղում են, չորացնում և ձմեռը տալիս են կենդանիներին։ Այս բոյսով շատ հարուստ են Մամուռան, Աղբուլաղ և Բօլգաջի գիւղերը։

Լօլօք։ Այս բոյսին գիւղացիները կոչում են «ծառ»։ Քաղում են սարերից։ Ունի 10 սնտմ. բարձրութիւն. իր տերեւներով տարածւում է հողի վրայ։ Ցայտնի է իր կարմրագոյն պտուղով, որին ասում են լօլօք։ Թարմ ժամանակ կեղեւը պոկում են և կարմիր միջուկն ուտում։

Այժմ Աբագանում բնակւող բնիկ Զարմահալցի Դանիէլ Բաբումեանը, մի առանձին կարօտով իր մանկութեան քաղցր օրերը յիշելով, գրում է.

«... կը բարձրանայի բարձր սարից,
Մեծ, ահարկու ժայռ ու քարից.
Խաւծիլ ու լօլօք, պռաս
Կը քաղէինք վռազ-վռազ[1]։
Մին էլ տեսար մութն ընկաւ,
Կը դառնայինք տուն վազէվազ։
Երբ վաստակած[2] կը գայինք տուն,
Հարս, աղջկերք ուրախ, ժպտուն,
Ողջ խլում ին[3] ծիծաղելով,
Մենք ուրախ ենք ու զարթուն»։

Ուռց։ Աճում է սարալանջերում և չայիր-չիմաններում։ Կանաչ է և ունի 10 սնտմ. բարձրութիւն։ Վարդից աւելի անուշահոտ է։ Ցայտնի է իր բուժիչ յատկութեամբ։ Գործածում են սրտցաւ և ստամոքսացաւ ունեցողները։ Պատրաստում են նաեւ օղի և տալիս սրտցաւով տառապող հիւանդներին։

Պռաս։ Կանաչագոյն է, իսկ արմատն սպիտակ է և ունի գնդիկներ։ Բնում է սարերի գագաթներում։ Ուտում են հաց ու պանրով կամ չորացնում և ապուրի մէջ լցնում։

---

(1) Շուտ-շուտ, աճապարել, շտապել։ (2) Յոգնած, (3) Էին։

© National Library of Armenia

Խաչրեժիլ։ Ունի 20 սնտմ. հաստ ու ճերմակ արմատ։ Լայն, կանաչ տերեւներով փուում է հողի վրայ։ Բսնում է սարի գագաթին։ Թէ մեծերը և թէ փոքրերը ծամում են սրա արմատը և թթուաշ ջուրը ծծում, որ մարսողութեան անչափ նպաստում է։

Ղիաղ։ Բսնում է թէ սարերում և թէ մարգագետիններում։ 20 սնտմ. բարձրանում է։ Ցօղունը կանաչ է և կատարը շաքարագոյն։ Զորացնում են։ Անասունների ամենասիրած կերն է։

Մկան գարի։ Բսնում է թէ սարերում և թէ դաշտերում։ 10 սնտմ. բարձր, շաքարագոյն, նուրբ մի խոտ է, որը շատ փոքր է և գարու նման է։ Հնձում են Յուլիս-Օգոստոս ամիսներին, չորացնում և ձմեռը տալիս են անասուններին։

Կապոյտ փուշ։ Բարձրանում է 10 սնտմ. և գլխին ունի փշածածկ կապոյտ գնդիկներ։ Յունիսին սարերից քաղում են, չորացնում և ձմեռ ժամանակ տալիս են ոչխարներին, որոնց ամենասիրած կերն է։

Զաղմայ։ Ունի նուրբ տերեւներ, բայց այնպիսի կծու հոտ, որ իրեն մօտեցողն իսկոյն փուշտում է։ Քաղում են սարալանջերից։ Անասունները չեն ուտում։

Բոչքայ։ Ունի մօտ կէս մետր բարձրութիւն։ Քաղում են սարալանջերից և կալը մաքրելու համար աւել են պատրաստում։ Շինում են նաեւ Բոչոգա։ Շարում են պատերի վրայ, որպէսզի անձրեւից պաշտպանուի։ Նոյնպէս իբրեւ վառելիք գործածում են թոնրում. իսկ երբ ձին, էշը և ջորին մրսում են և հիւանդանում, վառում են նրանց փորի տակ, կողքերի մօտ, որից յետոյ նրանք առողջանում են։

Մոչսիլ։ Սարերում աճող մի արդիւնաբեր բոյս է։ Գոյնը ճերմակ է։ Մաքրում են և գցում սառը ջրի մէջ և մի շաբաթ, ամէն օր, ջուրը փոխում, որպէսզի դառնութիւնն անցնի։ Ապա քամում են ջուրը, եռացրած ջրով եփում, քամում և վրան աղ ածում. յետոյ մածունի հետ խառնում և լցնում քսակի մէջ, որպէսզի մածնի և քամի, ապա ուտում են։ Սրան գիւղացիները կոչում են Թիլիքայ։

Քաղավոզ։ Բսնում է բարձրագագաթ սարերի վրայ և ձիւնի տակ։ Հարուստ է Փոշտքու (Ռուվար) սարը։ Երբ ձիւնը հալչում է, երկու օր անց քաղում են։ Ունի դեղին տերեւներ և ճերմակ արմատ, որն եփում և փռում են հողի վրայ։ Ապա երկու ժամ պահում են ջրի մէջ, որպէսզի քաղցրանայ։ Յետոյ քամում են ջուրը, աղով փաթաթում և կաշիէ քսակի կամ կճճի մէջ ածում, վրան քար դնում, որ պնդանայ։ Ձմրան ուտում են կերակրի հետ։ Տկերով տանում են նաեւ Նոր-Ջուղա և վաճառում։ Նոյնպէս չորացնում և ածում թանի մէջ։

Բօնրսօրիս։ Կապտագոյն և 15 սնտմ. բարձր այս բոյսն աճում է սարի գագաթին։ Պատրաստում են աղցան։

Գուլուֆիլ։ 23 սնտմ. բարձր, կանաչագոյն, անոյշ հոտով այս բոյսն աճում է սարերի ծմակ մասերում։ Զորացնում և ածում են թանի մէջ։

Խուզնանդի։ Կանաչագոյն է և ունի կէս մետր բարձրութիւն։ Բսնում է սարի գագաթին։ Զորացնում և տալիս են ոչխարներին։

Ժախ։ Մանր կանաչ տերեւներով փուում է սարի կատարի վրայ։ Ոչխարների համար ամենասննդարար կերն է։

Զվիլ։ Բարձրանում է կէս մետր և ունի շատ մանր կանաչ տերեւներ։ Բսնում է սարերի գագաթի վրայ և ժայռերի ծերպերում։ Զորացնում և ձմեռը տալիս են անասուններին։ Շատ սնունդարար է ոչխարների համար։ Ունի շատ անոյշ հոտ։

Զլբանդ։ Ունի մանր, կանաչ տերեւներ և $^3/_4$ մետր բարձրութիւն։ Բսնում է բարձր ժայռերի վրայ։ Զորացնում և ձմեռը տալիս են անասուններին։

Գոլզարդի։ Դեղնագոյն և անուշահոտ այս ծաղիկը ծաղկում է Համբարձման օրերին։ Ունի $^3/_4$ մետր բարձրութիւն։ Քաղում են սարերի գագաթներից, չորացնում և ձմեռը տալիս են միայն ոչխարներին։

Քլովզ։ Կանաչ տերեւներով և դեղին ծաղիկներով մի տունկ է, որը բսնում է սարոտ տեղերում։ Զորացնում և ձմեռը տալիս են անասուններին։

Քարդոռ։ Բսնում է լեռների և ձորերի վրայ՝ քարերի արանքներում։ Թփի նման է. ունի մի քանի ճիւղեր, որոնք բարձրանում են մօտ կէս մետր։ Ամէն մի ճիւղն ունի մի տերեւ, իսկ ցօղունը թփից բարձրանում է մօտ կէս մետր։ Թուփն արմատից քաղում են, չորացնում և 2-3 անգամ ջրով եռացնում, մինչեւ ջրի վերջանալը, որպէսզի կծու յատկութիւնն անցնի։ Ապա հացով ուտում են։

Նշանման խոտ։ Բսնում է սարերում և դաշտերում։ Շատ տաւատ է Մամուռան գիւղում։ Թփի նման է։ Ունի փոքրիկ կանաչ տերեւներ և շատ մանր, սպիտակ ծաղիկներ։ Զորացնում և ձմեռը տալիս են անասուններին։

Քեառակ։ Բսնում է սարերում և դաշտերում։ Կապտագոյն է, ունի կոշտ փշաւոր տերեւներ և 20 սնտմ. բարձրութիւն։ Զորացնում և ձմեռը տալիս են անասուններին։ Սեւ արմատները վառելափայտի տեղ են գործածում։

Խոշամզայ։ Կապոյտ գոյնով է. ունի 29 սանտմ. բարձրութիւն և ուռցի նման անոյշ հոտ։ Բսնում է սարերի լանջերում և դաշտերում։ Զորացնում և ձմեռը տալիս են անասուններին։ Օգի պատրաստելիս ածում են մէջը, որ անոյշ հոտ ստանայ։ Նոյնպէս դնում են կճուճի և թթու վարունգի մէջ, որ անոյշ հոտը փոխանցէ պանրին և վարունգին։

Քամախ։ Ունի կէս մետր բարձրութիւն, ճերմակ և մանր, կանաչ տերեւներ։ Անչափ անուշահոտ է։ Բսնում է սարի գագաթի վրայ։ Թարմ ժամանակ ուտում են էշը, ջորին և ձին, իսկ չորացրածը տալիս են ոչխարներին, որոնց անչափ սննդարար է։

Գեանդաղ. Դեղնագոյն է և բարձրանում է 20 սնտմ.։ Բսնում է սարի գագաթին և փուում հողի վրայ։ Անասունները չեն ուտում, միայն դեղին ներկ են պատրաստում։

Ղնտրղայ։ Բսնում է սարերի լանջերի վրայ։ Կապոյտ է։ Ունի փշաւոր տերեւներ և $1\,^1/_2$ մետր բարձրութիւն։ Զորացնում և ձմեռը տալիս են ոչխարներին, եզան և իշուկին։

Հաւաժայ։ Բսնում է Բոշտքու սարի վրայ։ Ունի կարմիր տերեւներ, որոնց քաղում են, չորացնում, ապա այծի ճրագուի (ճարպի) հետ խառնում, տաքացնում և դնում ուռած աչքերի վրայ։

Զառօվայ։ Հարուստ է Զարմահալի Քեալլար սարը։ Դեղ են պատրաստում։ Թէյի նման եռացնում են և տալիս քամի ցաւ ունեցող հիւանդներին։

Մանդաք։ Բսնում է սարի լանջերի վրայ։ Թարմ և չորացրած ժամանակ ուտում են անասունները։

Բնրլիտոտ։ Շաքարագոյն բոյս է։ Ունի 20 սնտմ. բարձրութիւն, իսկ ծայրին 2-3 գնդիկներ, որոնց մէջ բամբականման կակուղ նիւթ կայ։ Երբ բնբուլը որեւէ գիւղացու տունն է գնում, գուշակում են, թէ հիւր է գալու։ Զորացնում և տալիս են անասուններին։ Բսնում է թէ սարերում և թէ դաշտերում։

Ջէյրանի եօնջա։ Բսնում է սարերի և լեռնադաշտերի վրայ։ Փուում է գետնին։ Ունի կանաչ տերեւներ և կարմիր ծաղիկներ։ Ուտում են Ջէյրանները, որից առաջացել է իր անունը։ Նոյնքան սիրում են անասունները։

Սարի կակաչ։ Բսնում է սարերի վրայ և ձորերի մէջ։ Ունի կէս մետր բարձրութիւն, կանաչ տերեւներ և սեւ ցօղուն։ Կատարը զարդարում են 4 հատ կարմիր վարդանման ծաղիկներ։ Սպիտակ արմատը սոխի նման կլոր է։ Զորացնում են, ապա ջրով թացացնում և քսում քարին։ Կաթի նման հեղուկ է դառնում։ Այդ հեղուկը ոսկրացաւ ունեցողներին քսում են և բժշկում։

Խօզուկ։ Բսնում է սարի վրայ և դէմի (անջուր) արտերի մէջ։ Փոքրիկ թփեր են և ամէն մէկի վրայ կան ցորենի մեծութեամբ փշաւոր փոքրիկ հատիկներ։ Թարմ ժամանակ ուտում է ոչխարը։ Շատ կպչուն է։

Ահա այս է Զարմահալ գաւառի լեռնային և դաշտային բուսականութեան ընդհանուր պատկերը, որն այնքան մեծ դեր է կատարում գիւղացիների անասնապահութեան, սննդի, առողջապահութեան գծով և նրանց տնտեսական կեանքում *։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

թէհրան

(*) Այս հատուածը մի էջն է «Զարմանալ գաւառի պատմութիւնը» խորագրով անտիպ երկից։ 1946 թուին «Զարմանալի Ուսուցմասիրաց Միութեան» յարգելի վարչութեան յանձնարարութեամբ անցայ նոյն գաւառի հայաբնակ գիւղերը, գրելու համար գիւղացիների մանրամասն ազգագրութիւնը, որ այժմ մեծ մասամբ պատրաստ է։

© National Library of Armenia